ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ սույն քաղաքացիական գործով հայցվորը հայցադիմումը ներկայացնելիս վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով որպես դատական ծախս փաստաբանի խելամիտ վարձատրության գումար 300.000 ՀՀ դրամի բռնագանձման հայցվորի պահանջին՝ դատարանը գտնում է, որ հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում հայցվորի կողմից ներկայացված փաստաբանի խելամիտ վարձատրության բռնագանձման վերաբերյալ պահանջը ևս ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է պատասխանող «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված 250.000 ՀՀ դրամի՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջին, ապա դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն արձանագրում է, որ գործով փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 17.10.2024 թվականին «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի միջև կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 81/2024 պայմանագիրը:

Պայմանագրի 2.1. կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար պատվիրատուն պարտավորվում է վճարել 250.000 ՀՀ դրամ:

Ելնելով փաստաբանին վճարվող գումարի խելամտության սկզբունքից, սույն քաղաքացիական գործի առանձնահատկությունից, ամբողջության մեջ հաշվի առնելով գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, վիճելի իրավահարաբերության բնույթը՝ դատարանը գտնում է, որ 250.000 ՀՀ դրամը հանդիսանում է սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ, հետևաբար գտնում է, որ «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պետք է բռնագանձել 250.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 05.09.2024 թվականին կայացված թիվ ԲԲԿ-2024/4 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:
4. Դատական ծախսերի հարցը, այդ թվում՝ պետական տուրքի մասով, համարել լուծված:
5. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:
6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am